



# Ը Հ Մ Տ Ե Ղ Ե Կ Ա Գ Ի Ր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ  
ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ  
ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ  
ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ  
2013 թ. թիվ 19

## ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ը՝

### ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՐ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՕՐ

Յուրաքանչյուր տարի հոկտեմբերի 7-ին աշխարհի արհմիությունները լայնածավալ նշում են Արժանապատիվ աշխատանքի համար պայքարի համաշխարհային օրը:

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների արհեստակցական կազմակերպությունների ճյուղային հանրապետական միությունը, կարևորելով Հայաստանում արհմիությունների վարկանիշի բարձրացումը, ս.թ. հոկտեմբերի 7-ին կազմակերպել էր Երևանի քաղաքապետարանի կողմից արտոնագրված Արժանապատիվ աշխատանքի համար պայքարի համաշխարհային օրվան նվիրված խաղաղ երթ: Երթն ընթացավ Հանրապետության հրապարակ-Արոլյան-Թումանյան փողոցներ-Հյուսիսային պողոտա-Հանրապետության հրապարակ երթուղով:

Երթի կարգախոսներն էին՝ "ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 7-Ը՝ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՕՐ", "ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ՝ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ", "ԱՇԽԱՏԱՎՈՐ ՄԱՐԴՈՒՆ՝ ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՆՔ, ԱՐԺԱՆԱՊԱՏԻՎ ԱՇԽԱՏԱՎԱՐՁ", "ՈՒԺԵՂ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆ, ՈՒԺԵՂ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ", "ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՈՒԺԸ ՄԻԱՍՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ Է, ԱՆԴԱՄԱԿՑԵՔ ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ":

Չնայած աշխատանքային օրվան, երթին ակտիվ մասնակցում էին հատկապես պետական հիմնարկների արհմիության անդամները, նաև ՀԱՄԿ-ի աշխատակազմը, հարակից ճյուղային միությունների արհմիության անդամները, իսկ տարածքներում ՃՀՄ-ի առաջարկով բազմացվել և տարածվել էր օրվան համապատասխան հայտարարություն:

Երթը լուսաբանվել է տարբեր լրատվամիջոցներով:

Հույս ունենք, որ արդեն ավանդույթ դարձած երթերն ու նմանատիպ միջոցառումներն անխուսափելիորեն կբարձրացնեն արհմիության վարկանիշը, լսելի կդարձնեն արհմիության ձայնը և ակնկալում ենք ոչ միայն մեր ընթերցողների, այլ նաև հասարակության առավել լայն հատվածների ակտիվ մասնակցությունը նշված միջոցառումներին:

## ԴԵՊԻ ԱԿՏԻՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՄԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Սկսած գործը կիսատ չթողնելու մղումով ՃՀՄ-ն կրկին անդրադարձավ քաղճառայողների բազային աշխատավարձի բարձրացման հարցին: Այս անգամ ՃՀՄ-ն նախաձեռնեց նշված հարցով էլեկտրոնային ստորագրահավաքի կազմակերպումը, ինչը քաղաքակիրթ ճանապարհով հարցի լուծմանը հասնելու ՃՀՄ հերթական փորձն է:

Ստորագրահավաքին աջակցում է նաև Արհմիությունների միջազգային ֆեդերացիան, որն իր հերթին գրավոր դիմել է ՀՀ նախագահին, ՀՀ վարչապետին և ՀՀ ԱԺ նախագահին:

Ստորև ներկայացնում ենք Բաց նամակը.

Հայաստանի պետական հիմնարկների, ՏԻՄ-երի և հասարակական սպասարկման աշխատողների ճյուղային հանրապետական արհմիությունը մի քանի տարի շարունակ պայքարում է քաղաքացիական ծառայողների բազային աշխատավարձի բարձրացման համար:

Արդեն 5 տարի է, ինչ քաղճառայողների բազային աշխատավարձը մնում է անփոփոխ, մինչդեռ ըստ Ազգային վիճակագրության ծառայության կողմից տրամադրված տվյալների՝ գնաճը այդ ժամանակաշրջանում մինչև գազի, էլեկտրաէներգիայի գների հուլիսյան

բարձրացումները կազմել է 40,2 %: Պետական ապարատի գործունեությունն ապահովող, բարձր որակավորում ունեցող աշխատողները, փաստորեն, չեն վարձատրվում ըստ արժանվույն, իսկ նրանց միջին աշխատավարձը չի ապահովում աշխատողի և նրա ընտանիքի բավարար կենսամակարդակը: Այդ ամենի հետ մեկտեղ 2014 թվականի հունվարից աշխատողների մի մասի եկամուտը կպակասի ևս 5 %-ով, քանի որ սկսելու է գործել պարտադիր կենսաթոշակային կուտակային համակարգը:

Գտնում ենք, որ ՀՀ իշխանությունները պետք է լուրջ ուշադրության արժանացնեն քաղաքացիական ծառայողների վարձատրման հարցին: Խոստացած հուլիսյան բարձրացումը չափազանց ուշացած կլինի և չի հասցնի քաղաքացիական ծառայողի վճարունակության մակարդակը նույնիսկ 2008 թվականի մակարդակին:

**2.9.** Բաց նամակի բովանդակությունը, ստորագրություն կցելու ձևը և յուրաքանչյուրի ստորագրության կարևորությունը մեր անդամ կազմակերպությունների նախագահներին գրավոր ու բանավոր բազմաթիվ անգամ հանգամանորեն իրազեկելով՝ ակնկալում էինք մեր համակարգի 16000 արհմիության անդամների ակտիվ մասնակցությունը նախաձեռնությանը, սակայն առ այսօր ընդամենը 200-ին է հուզել քաղծառայողի բազային աշխատավարձի ցածր լինելը, որի ընդամենը մի փոքր մասն է արհմիության անդամ: Ինչևէ: Փորձենք չհուսահատվել, լինենք միասնական, համախմբած: Գիտակցենք, որ իրական արհմիությունը ուժեղ քաղաքացիական հասարակության լավագույն գրավականներից է: Ստորագրենք [www.change.org](http://www.change.org) կայքում՝ հետևյալ հասցեով [smarturl.it/ashxatavardz](http://smarturl.it/ashxatavardz):

## **ԵՐԻՏԱՍԱՐԴՆԵՐՈՎ ԱՄՐԱՊՆԴԵՆՔ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՔԵՐԸ**

Ստահոգված հասարակության լայն հատվածներում արհմիության դերի, ազդեցության և հեղինակության բարձրացմամբ, երիտասարդությանն արհմիության կազմում ընդգրկելու գաղափարով՝ ճյուղային արհմիությունը նախաձեռնեց անդամ կազմակերպությունների երիտասարդ արհմիութենականների շրջանում արհմիութենական տարաբնույթ սեմինարների անցկացումը:

Նշված սեմինարներից առաջինը ճյուղային արհմիությունն անցկացրեց Ծաղկաձորում հոկտեմբերի 11-13-ը Երևան քաղաքի և մոտակա տարածքների անդամ կազմակերպությունների շուրջ 30 երիտասարդ արհմիութենականների համար, Աշխատանքի միջազգային կազմակերպության միջոցով: Մասնակիցները ներկայացնում էին ՀՀ սահմանադրական դատարանը, ՀՀ Էկոնոմիկայի, աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունները, Երևանի քաղաքապետարանը, Արաբկիր, Շենգավիթ, Մալաթիա-Մեքաստիա վարչական շրջանների ղեկավարների աշխատակազմերը, ՀՀ պետական գույքի կառավարման վարչությունը, ՀՀ զբաղվածության պետական ծառայություն գործակալությունը, ՀՀ ազգային վիճակագրական ծառայությունը, «Զատիկ» երեխաների խնամքի և պաշտպանության կենտրոնը, Խարբերդի մասնագիտացված մանկատունը, նաև մի քանի տարածքների որոշ պետական հիմնարկներ:

Արհմիութենական ուսուցման երկրորդ փորձը Դիլիջանի «Հաղարծին» հյուրանոցում էր, Իջևանի, Նոյեմբերյանի, Դիլիջանի, Սևանի տարածքների շուրջ 30 երիտասարդ արհմիութենականներ տիրապետեցին արհմիության էությանը:

Տարբեր կազմակերպություններ ներկայացնող երիտասարդներ համախմբվեցին արհմիության գաղափարի շուրջ. ովքեր ծանոթ չէին արհմիությանը, տեղեկացան, ինտերակտիվ եղանակով ներկայացրին արհմիության իրենց պատկերացումները, «անցկացրեցին արհմիության անունը հնչեցնող միջոցառումներ, հեռուստահաղորդումներ», «արհմիության անդամներ դարձան մի շարք աշխատողներ», ընդհանուր պատկերացում կազմեցին արհմիության գործառույթների, կառուցվածքի, մասնավորապես պետիմնարկների աշխատողների արհմիության գործունեության ու իրականացվելիք աշխատանքների մասին, համոզվեցին, թե որքան կարևոր է արհմիության անդամների միասնականությունն ու համախմբվածությունը աշխատավայրում, առաջարկեցին տարածքներում հաճախակի հանդիպումներ կազմակերպել՝ աշխատողների առավել լայն շրջանակում արհմիությունը լուսաբանելու համար:

Ս Ո Ց Ի Ա Լ Ա Կ Ա Ն Փ Ա Թ Ե Թ

**Պետհիմնարկներում աշխատողների սոցիալական փաթեթ ստանալուն և օգտագործելուն առնչվող խնդիրների շուրջ բազմաթիվ բողոք-առաջարկները ստիպեցին մեզ դիմել ՀՀ կառավարության**

Մասնավորապես՝ սոցփաթեթ ունեցողները բողոքում էին, որ ասենք զարնանը կամ ամռանը իրենց հասանելիք 80000 դրամը չէին կարող հանգստի կազմակերպմանն ուղղել, քանի որ այդ ժամանակ բանկային հաշվում չկար այդքան գումար: Այդ պարագայում բանկն առաջարկում էր վարկային գիծ ձևակերպել. աշխատողն այս դեպքում էլ չէր կարող նշված գումարն ամբողջությամբ օգտագործել, քանի որ դրանից մարվելու էին վարկի տոկոսները: Նշված հարցով ՀՀ կառավարություն դիմելն անարդյունք չեղավ. ստացանք դրական պատասխան: Ներկայացնում ենք քաղվածք ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի ղեկավարի պաշտոնակատար Կարեն Թամազյանի գրավոր պատասխանից. «...հանգստի ապահովման ծառայությունից օգտվելու դեպքում աշխատողը կարող է իր և զբոսաշրջային օպերատորի միջև կնքված պայմանագիրը ներկայացնել իր աշխատանքի վայրի սոցիալական փաթեթի գումարի փոխանցման համար պատասխանատու ստորաբաժանում՝ սոցիալական փաթեթի տվյալ բյուջետային տարվա համար նախատեսվող սոցիալական փաթեթի գումարները միանվագ իր սոցիալական փաթեթի հաշվին փոխանցելու նպատակով: Այս դեպքում աշխատողը պարտադիր պետք է այդ ծառայությունից օգտվելու ժամանակահատվածում գտնվի արձակուրդում: Սոցիալական փաթեթի գումարի փոխանցման համար պատասխանատու ստորաբաժանումը պայմանագիրը ստանալուց հետո առավելագույնը 10 աշխատանքային օրվա ընթացքում աշխատողի սոցիալական փաթեթի տվյալ բյուջետային տարում նախատեսվող գումարները փոխանցում է աշխատողի սոցփաթեթի հաշվին: Սոցիալական փաթեթի գումարի փոխանցման համար պատասխանատու ստորաբաժանումը որպես գումարի փոխանցման համար հիմք հանդիսացող փաստաթուղթ է ընդունում նշված պայմանագիրը կամ դրա պատճենը:

Ելնելով վերոգրյալից՝ գտնում ենք, որ նոր ընդունված որոշումը սահմանված կարգով ուժի մեջ մտնելուց հետո հանգստի ապահովման ծառայությունից օգտվելու դեպքում (նույնիսկ զարնան և ամռան ամիսներին) աշխատողը կարող է իր և զբոսաշրջային օպերատորի միջև կնքված պայմանագիրը ներկայացնել իր աշխատանքի վայրի սոցիալական փաթեթի գումարի փոխանցման համար պատասխանատու ստորաբաժանում և **միանվագ** ստանալ սոցիալական փաթեթի տվյալ բյուջետային տարվա համար նախատեսվող սոցիալական փաթեթի գումարները»:

\* \* \* \* \*

ՀՀ կառավարության ուշադրությունը հրավիրել էինք նաև մեր անդամ կազմակերպություններից երկուսի աշխատողներին սոցիալական փաթեթով ապահովելու անհրաժեշտությանը՝ ՀՀ կառավարության «Սպասարկում» ՊՈԱԿ-ի թվով 323 աշխատողներին, որոնցից 200-ը ստանում են նվազագույն աշխատավարձ և «Լուսանշան» ՊՈԱԿ-ի թվով 90 աշխատողների, որոնց միջին ամսական աշխատավարձը մոտ 95000 դրամ է:

Ի պատասխան Կ. Թամազյանը վկայակոչում է ՀՀ կառավարության որոշմամբ հաստատված կարգը, որով սահմանվում է «կրթության, մշակույթի, սոցիալական պաշտպանության և գիտության ոլորտների պետական կազմակերպություն համարվող պետական ոչ առևտրային կազմակերպությունների սպառիչ ցանկը, որոնց աշխատողները կարող են օգտվել սոցիալական փաթեթի մեջ մտնող ծառայություններից»: Պաշտոնյայի կարծիքով, քանի որ «Սպասարկում» ու «Լուսանշանը» «նշված ոլորտներում գործունեություն չեն իրականացնում, ուստի չեն կարող ընդգրկվել Կարգով նախատեսված կրթության, մշակույթի, սոցիալական պաշտպանության և գիտության ոլորտների պետական կազմակերպությունների ցանկում»:

\* \* \* \* \*

ՀՀ աշխատանքային օրենսգրքի հոդված 25-ի 2-րդ կետով արհմիություններին վերապահված իրավունքով դիմեցինք ՀՀ փոխվարչապետ, ՀՀ տարածքային կառավարման նախարար պարոն Ա. Գևորգյանին՝ տեղական ինքնակառավարման մարմինների աշխատակիցներին համայնքային բյուջեներից սոցփաթեթով ապահովելու հնարավորությունները դիտարկելու առաջարկով: Նախարարի առաջին տեղակալ Վ. Տերտերյանի պատասխանը հետևյալն էր. «Հարգելի տիկին Ասատրյան, Ձեր 2013 թվականի օգոստոսի 13-ի N 74-01 գրությամբ բարձրացված խնդրին տեղյակ է նաև Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարությունը, որի լուծման ուղղությունների վերաբերյալ հարցը կարող է քննարկվել համայնքային բյուջեներում համապատասխան միջոցների առկայության դեպքում»:

## Ը Ն Թ Ա Ց Ի Կ

Հաշվի առնելով, որ ՃՀՄ-ի շուրջ 16000 արհմիության անդամներից մեծ մասն ապրում ու աշխատում է Երևան քաղաքում և ամեն օր օգտվում է հասարակական տրանսպորտից՝ Երևան քաղաքում տրանսպորտի թանկացման աղմկահարույց փորձից հետո ձևավորված տրանսպորտի ուղեվարձը քննարկող հանձնաժողովի կազմում ընդգրկվեց նաև ՃՀՄ նախագահ Ա. Ասատրյանը: Պարբերաբար հրավիրվող նիստերում ՃՀՄ նախագահը ներկայացնում է իր տեսակետներն ու առաջարկները, որոնք բացառապես բխում են ներքաղաքային տրանսպորտից օգտվող բնակչության, մասնավորապես արհմիության անդամների շահերից:

Հանձնաժողովում արհմիության միակ ներկայացչին ցանկանք մեծ տոկոսություն՝ բնակչության շահերը անխոչընդոտ ներկայացնելու և պաշտպանելու համար:

\* \* \* \* \*

Ընթացիկ տարվա սեպտեմբերի 20-22-ը Անկախության տոնի առիթով ՃՀՄ-ն «Պրոֆտուր» ՄՊԸ-ի օգնությամբ կազմակերպեց արհմիության ակտիվը այցը դեպի Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն: Մասնակիցներն այցելեցին Նորավանք, Տաթևի վանք, իջևանեցին Շուշիի համալուսն հյուրանոցում, ծանոթացան Գանձասարին, Տիգրանակերտին, Ստեփանակերտին, Շուշիին: Նաև ցանկություն հայտնեցին, որ նման միջոցառումները շարունակական լինեն:

\* \* \* \* \*

Իջևանի տարածքային միության գործատուների, հաշվապահների ու արհմիութենական ակտիվիստների համար ճյուղային միության միջոցներով Ծաղկաձորում անցկացվեց սեմինար «ՀՀ աշխատանքային օրենսգրքի նորմերի կիրառումը» թեմայով: Սեմինարն անցկացրին ՃՀՄ նախագահ Ա. Ասատրյանը, Իջևանի տարածքային արհմիության նախագահ Ա. Աչինյանը, ՀԱՄԿ-ի իրավաբանական բաժնի պետ Մ. Փիլիպոսյանը: Մ. Փիլիպոսյանը պարզաբանեց Աշխատանքային օրենսգրքի հիմնական դրույթները, պատասխանեց մասնակիցների հարցերին: Ներկայացվեցին արհմիության խնդիրները տարածքում ու կատարվող աշխատանքները: Ճյուղային միության նախագահը դիմել է ՀՀ կառավարություն՝ ներկայացված որոշ խնդիրների կարգավորման համար միջոցներ ձեռնարկելու համար: Սեմինարը համատեղվեց մասնակիցների 1-օրյա հանգստով:

\* \* \* \* \*

Ճյուղային հանրապետական արհմիության աշխատակից Ջուլետա Գևորգյանի երկարամյա անբասիր, բարեխիղճ, եռանդուն արհմիութենական գործունեությունը և 70-ամյակը նշանավորվեց ՀԱՄԿ-ի պատվոգրով, ինչի առիթով շնորհավորում ենք տիկին Գևորգյանին:

\* \* \* \* \*

ՃՀՄ նախագահության 10.10.2013թ. նիստում քննարկված բազմաբնույթ հարցերից ու ընդունված որոշումներից էին ՃՀՄ խորհրդի՝ սույն թվականի նոյեմբերին անցկացվելիք արտագնա նիստը, անդամ կազմակերպությունների երիտասարդ արհմիութենականների համար արհմիության մոտիվացիայի տարածումը, Երևան քաղաքի անդամ կազմակերպությունների միջև կարանկե-մրցույթի անցկացումը և այլն:

\* \* \* \* \*

«Պրոֆտուր» ՄՊԸ-ն ընդլայնել է իր ծառայությունների շրջանակը՝ առաջարկելով ամանորյա հանգստի փաթեթներ Ծաղկաձորի, Ջերմուկի, Դիլիջանի, Վանաձորի, Եղեգնաձորի, Հանքավանի, Աղվերանի, ԼՂՀ-ի և այլ հանգստավայրերում:

*Ճյուղային միության աշխատանքներին հետևել, առաջարկություններ ու դիտողություններ կարող եք անել արհմիության կայքում ([arhmiutyun.org](http://arhmiutyun.org)) կամ ֆեյսբուքյան էջում՝ (ֆեյսբուքում որոնելով «Հայաստանի պետհիմնարկների արհմիություն»)*